



Կ. Պոլսոյ համար Տարեկան հաճ.-
դերձ Օրաբերքով 180 դր.
Վեցամսեայ „ „ 100 „
Գաւառաց համար Տարեկան հաճ.-
դերձ Օրաբերքով 200 „
Վեցամսեայ „ „ 100 „
Մեծ քիւլ՝ „ „ 2 դր.
Օրաբերք „ „ 20 փր.

ԼՐԱԳԻՐ

Մանուգմանց տողը մեկ անգամի համար
3 դր. երկու անգամի համար 2 դր.
Դուրս գացած լրագրաց համարու ծախս-
քը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ համակ կամ որ
եւ իցէ գրութիւն խմբագիրքս ճշօրե-
կին պիտի ուղղուի. եւ հաճու ծախ-
քը ալ դրկողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կերբին քաղաքականութեան վե-
ճակն երթալով աւելի հանդարտ կեր-
պարանք մը կառնու. Արիւսի գործե-
րը տակաւին կերկարին, բայց պաշտո-
նական անդհիւթիւնները միշտ ապա-
հովութիւն կուտան թէ վերջը մօտե-
ցած է. Բարձր. Սուլթանի փաշան
Բարձր. մեծ Եղարքոսին գրած տեղե-
կադրին մէջ կը ծանուցանէ թէ Սֆա-
քայի, և Երզրոնայի նահանգներն և
Քանսիայի ու Բեթիւնայի շրջանայ նա-
հանգաց մեծադորն մասն արդէն հը-
նազանդած են, և միայն քանի մասն
մատոյց գեղեր կը մնան, որոց վրայ պի-
տի երթալ եղեր անձամբ, և կը յու-
սացուի որ անոնք ալ՝ որոյցմէ շատը հը-
նազանդութեան համար արդէն կը բա-
նոցին եղեր, քիչ առնեն զէնքը վար
կը դնեն:

Միւս կողմէն հեղինակն լրա-
գիրներն, ինչպէս նաև Լեվոնթ-Շե-
րքարի առեւած տեղեկութիւնները կը ծա-
նուցանեն թէ ապստամբ իրենց անյոյս
դրոյն նայելով՝ բաւական մեծ յաջո-
ղութիւններ վաստակած են կայսերական
զօրաց վրայ: Եյս ալ թէ և անհաւա-
տալ կը թուի մեզ, բայց թէ՛ Յունաս-
տանի մէջ և թէ՛ Եւրոպայի զանազան
քաղաքները գտնուող յոյներն իրենց
ազգակցաց օգնութիւններ հաջողեալու
համար ապաւին անեն ջանքի գործ կը
դնեն: Սարկապոլի պաշտպանութեամբ
Խալկոն մէջ ստորագրութիւններ կը բաց-
ւին և համաւոր զինուորներ Արիւսեաց
հետ մէկտեղ կուտան կերթան. բայց
ինչպէս արդէն ծանուցինք, խտրական

կառավարութիւնը Ֆիւրէնցայի հեղե-
նական հիւսարտոսն տուեր խուզարկե-
լով՝ կամաւոր զինուորագրութեան կեղ-
րոնը հոն ըլլալը հասկըցաւ, և առաջ-
քն առնելու միջոցներ անօրինեց: Ե-
թէնքի և բոլոր Յունաստանի մէջ ժո-
ղովրդեան եւանդը վերջին ծայրն է, և
կառավարութիւնը չհամարձակիր եղեր
ազգային շարժումը դադարու. Եւնեն և
քիտասարքներ ինքզինքնին զինուորական
կրթութեան առեւած են, և շարունակ
առիթ կը փնտռեն Արիւս վազելու:
Իսկ Գէնթը թաւաւորին պաշտօնեայ
ներն այս պարագայից մէջ ազգային խոր-
հորդարանք բանալու չհամարձակելով՝
անոր գումարումը եւ ձգեցին, որպէս
զի իրաց արդէն դժուարին վիճակն ա-
ռաւել ևս չծանրանայ: Հեղինակն
Բանհէլէնիոն չորեքուր՝ որ անցեալ
ները Արիւս կամաւոր զօրք և պատե-
րազմի միջեք տանելով անցածող-
թեամբ եւս դարձած էր, այս անգամ
նորէն գացեր է, և օգերուն գէշութե-
թեւէն օգուտ քաղելով՝ 500 ի չափ
կամաւոր զօրք և շատը միջեք Արիւս
հաներ ու նորէն Երա դարձեր է:

Եւրոպայի երեսփոխանական ժո-
ղովին կանոնադրութիւնը չորեքուր թի-
օրը հրատարակեցինք: Լեվոնթ-Շե-
րքար լրագրին Արիւստոսի մէջ այնպիսի
երեսփոխանական գրութեան մը հաս-
տատուիլը՝ Ասեմ. Կուար փաշային
հարած մէկ կեղծ բարեկարգութիւնը
կը համարի, որպէս զի Եւրոպայի աչ-
քը շարունակ՝ կարենայ փոխաբային
համար նոր փոխառութիւն մ'ալ ձեռք
բերել: Եյս ալ խնդրին մէկ ուրիշ
գէտքն է, որոյ ճշմարտութիւնը ժա-
մանակը ցոյց պիտի տայ: Եւնեն օրէնք
և բարեկարգութիւն գործադրութեամբ

միայն օգտակար կրնան ըլլալ և արժէք
ունենալ: Ուստի բնականաբար հետա-
քըքրութեամբ կայսերնք թէ Եւրոպ-
ական երեսփոխանութիւնն ինչպէս
պիտի կողմուի իրօք և արդիւնաւոր
ըլլայ:

Օսմանեան կայսրութեան հպատակ
իշխանութեանց մէջ Սերվիս միայն գրե-
գոհութիւն ցոյց կուտայ: Բուսանիա
և Վարատող իրենց փափաքանաց հա-
սան. ուստի Սերվիս Միլայէ իշխանն
ալ իր միւս իշխանակիցներէն եւս մնալ
չուզեր. պահանջուածներ ունի՝ որոնց կա-
տարումը կը խնդրէ: Բուսանիոյ մէջ Օս-
մանեան զօրք չկայ, բայց Սերվիս մէջ
թէ և քաղաքներէն տաճիկ բնակիչներն
հանուեցան և Պէրիւսի հինգ Օս-
մանեան բերդերէն երկուքը 1863 թ. քա-
ւեցան, տակաւին երեքը կայսերական
պարտ ձեռքն է: Ուստի անոնց ալ պար-
տաւոր խնդրելու համար Միլայէ իշ-
խանն առիթ ձեռքէ չփախցրեր: Եւն-
եաները կը ծանուցանեն թէ մոյրա-
քաղաքի Սերվիս գործակաւորը նոյն
առաջարկութիւնը պիտի ներկայացնէ
Բ. Գրան. Եյս անգամ եւրոպական
լրագրոյց մէջ կը կարդանք թէ Սերվիս
իշխանը Ա. Եւնեն ալ պատգամաւորներ
ղրկեր է, որպէս զի աւստրիական կա-
ռավարութիւնը համարեն իր առաջար-
կութեան կատարմանը նպաստելու:
Ա. Եւնենայի կէս պաշտօնական ձեռ-
նալը Սերվիս իշխանին խնդրին անտես
չընելու յորդորներ կուտայ Բ. Գրան.
բայց չյուսացուի որ աւստրիական կա-
ռավարութիւնն իրենցից դժուարու-
թեանց մէջ իրօք կարենայ պաշտպան
կանգնել Սերվիս:

Կերբից տարին Եւստրիոյ կայսերական
ընտանեաց համար չարաշուկ եղաւ:

Եւրոպայի մէջ Պրանչիակոս Յովսէփ
կայսեր եկած ձախողութիւններն ար-
դէն յայտնի են. իր եղբայրը Մաքսի-
միլիանոս Կայսրն ալ լաւագոյն բաղդ մը
չունեցաւ: Մէքսիկայի մէջ նորահաս-
տատ կայսրութեան անյոյս վիճակը շատ
անգամ նկարագրած ենք, ուստի ոչ ոք
կը պարմանայ որ Մաքսիմիլիանոս կայս-
րը հակառակից աշխարհին մէջ իր ստա-
ցած դահը ձգելով Եւրոպայ վերա-
գաւառայ, ինչպէս որ հեռադիրը կը ծա-
նուցանէ: Մէքսիկայի կայսրութիւնը՝
եթէ անգլիական լրագրոյց խօսքին նա-
յինք՝ Կարոլէոն կայսեր մէկ դադա-
ւարն էր, որպէս զի Եւստրիոյ մէջ
Եւնեն—Մաքսոն ցեղին դէմ լրտին ցե-
ղէ տերութիւն մը կանգնէ, ինչպէս որ
Եւրոպայի մէջ գլխաւոր կանգնեց:
Եյս գաղափարը Միլայէալ—Կահան-
դաց սոսկալի քաղաքային կայսերազմին
ժամանակ հարաւայեաց յաղթութեանը
վրայ հաշիւ ընելով՝ ի գործ դրուած
էր, բայց հաշիւը սխալ երաւ և գործն
ալ չըլլացաւ յաջողի:

Հարաւայեաց ապստամբութիւնը
գաղութեաց, և Եւստրիոյ մեծ հասա-
րակապտութիւնը նորէն Մոնթի հը-
ւակաւոր սիղեռներ ձեռք առնելով՝
Եւստրիոյ գործերուն մէջ Եւրոպայի
միջամտութիւնը մերժեց և Մէքսիկա-
յին գաղութական զօրաց երկը պահան-
ջեց: Գաղութալ Եւստրիոյեան Ուկիա-
նոսէն անդին մեծ պատերազմի մը մէջ
նետուի չուզելով իր գործերը եւս դար-
ձունել որոշեց, թողուի որ Մաքսի-
միլիանոս կայսրն ինքն իր գահին պահ-
պանութիւնը հոգայ: Բայց գաղութական
զօրաց մեկնելէն ետեւ նոր կայսրութեան
ինքնիւրէն գիտնալն անհնարն էր, և
Եւստրիոյ կայսրութեան Եւրոպայ լրած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՐԵՄԵՆՕՍՈՒԹԻՒՆԻՐ

Եզնիւ Ա. աղաւը:

Եհա դարձայ բացահայտութեանս,
և բարեկամս ի գուր պիտի չհար-
ցունեն այսուհետեւ թէ ո՛ւր մնացին
մեր տրամախօսութիւնները, և թէ
այնչափ կատարժին մարի ընել զանոնք,
կրնան երբեմն Մասիսի ստորտար գմեղ
գտնել: Գուր ալ որ դժուարութիւն
ներ կը գտնէիք նամակի միջոցաւ զանոնք
յուսուլ տանելու, յուսում թէ որ և
իցէ ձեռով մը շարունակելու չէք վարա-
նիր: Գարձեալ իմ նորանոր գրազմուք-
ներս՝ ոչք վերադարձս փութացուցին
եթէ զմեզ խօսակցելէ արդիւնէ, կար-
ծեմ մամուլը թղթատուէն ազէի մի-
ջոյ մը կըլլայ այն ատեն մեր յանձն ա-
ռած զբօսեցուցիչ պարտիքը փոփոխ-
կի կատարելու:

Բարեկամ ինչեւ չէ պատահեր իմ
մեկնելէս ի վեր այս նոր յաւիտեական
քաղաքին մէջ. ինչեւ չէ Ա. սփորի գեղե-
րուն և անեղ շաւիղներուն մէջ:

Եյս իրիւնը որ տուն հասայ, ժա-
մը կէսն էր, և անօթի ծանաղարհոր-
դի մը բնական եղածին պէս կերակու-
րի սեղանը աճապարելու տեղ կրակա-
րանին մօտ ուրիշ սեղանի մը առաջ-
քը աթոռի մը վրայ նստայ, և փոխա-
նակ անձեռաց մը բանալու Մասիսի շա-
բաթաթերթը գիրքս տարածեցի:

Եւստր. և վայրկեական եղաւ իմ
անհարկա լրագրին վրայ, և մէկէն ի մէկ
ուշադրութիւնս ձեռք թուր տրամախօ-
սութիւնը դրաւ եւ: Իրօք ալ այնպէս
պէտք էր ըլլալ, փասն զի ինձ՝ քան թէ
ուրիշն մ'ուզուած էր այն:

Գրական աշխարհէն նոր լուր մը
չկայ կրտքի, սակայն Օհիստան անու-
նով թերթի մը երևումը կը ծանուցա-
նէք: Եւստր վերջին թիւը կարդացի,
բայց քննադատութիւնը զանց կրեմ, և
կը փափաքեմ որ Չուստանեան Պատուե-
լեկն թերթը պատանի բանասէրները իր-
րախօսեն: Իրձերուն գալով կերեւա-
կայեմ որ տակաւին շատեր պիտի տես-
նէք անոնցմէ, որովհետեւ գրեւոր որ
սրտի ինչեւր վերջ չունին: Իսկ Արա-
ցիկէլայի թարգմանութեան մեկնաւորհը
կը տեսնեմ որ ուսուցման օրիորդը

խիտ արժան գներ է. և Օհիստանին
զայն հրատարակութեան գաղութներու
զեջուամ ալ տեսակ մը ինչի արդիւնք
կը համարուի: Իմ խոյս եթէ կը հար-
ցնէք՝ այն է որ մեր անմեղ կատակ-
ները Օհիստանին սիրտը չըլլացնեն:
Խաւարթ ինի «Քանսամայ Եջերուն»
թարգմանիչներն ալ կարծեմ Տիւմայի
գիշերաւոր վեպատանութեան թարգմա-
նիչներուն չափ բազմաթիւ են. չհա-
ւատացողը կրնայ հարցնել Պահձե
Գարու Մօնթե Բրիտիոյ գրասեն-
եակը:

Տաւաղարձութեան համար Ման-
դուլի բողոքները իրաւունքը չենք յա-
փըշակելու ձեռքէն. այդ ալ ուրիշ ի-
րաւանց պէս իրաւունք մ'է. բայց այս
կը յիշենք որ գէշ կամ աղէկ այդ նոր
վերնադիր կամ տիրոջորդ պէտք է ըն-
դունել, փասն զի Արեւոյ յիւստամ-
րութեան նկատմամբ Բ. Գրան նը-
պաստաւոր լեզու մը գործածող լրագ-
րագրողներուն շքանշան չնորհուած ա-
տեն՝ իւր ազատախօսութիւնն ալ ա-
ռանց վարձատրութեան չէ թողուեր:
պաշտօնական անդէ մը այդպիսի տիպոս
մը ստանալը քիչ պատիւ չըրեր իրեն:

Թող պանծայ որ իւր անուանակոչու-
թիւնն ալ եկեղեցական կիցահօր մը
բերեն կրեւորնի, և խառն ժողովն
ալ զայն կը վաւերացնէ:

Բայց եթէ ձեր տրամախօսու-
թեան մէջ զիս յանգալի խնդրոյսով
բան մը կար, այն ձեր դուարձակ և
րազն էր, երաջ մը՝ որուն մեկնութիւն-
նը Յովսէփներու և Դանիէլներու կա-
րօտ չէ, և զայն հասկնալու համար
Լեօն Բրիտիոյ երազահանը կար-
գալու հարկ չկայ:

Օհիստանեւր եկող դրացիներ
անոր պարագայներուն վրայ ընդարձա-
կօրէն և մրցանօք ինձ խօսեցան: Ու-
րեմն առեւանգութիւններն այս տար-
ւան կամ վերջին ամիսներու «մօտան»
են Պոլսոյ մէջ: Ա. սփորի արիւնքնե-
րուն մէկէն սիրահար մը զգրու հին կա-
ռուանդէ. այն դէպքին վրայ ամեն մարդ
առաջադէմներ կը յորինեն և կողմն հաւ-
տացնէ: Եւստրիոյ մը որդին ալ նոյն
արիւնքներէն Բրիտիոյ մը հետ կը փոխ-
ջի, և իր առեւարական շահերը Յովսէ-
րայ ցեղին հետ կապուած ըլլալ տես-
նելով՝ իրեն թէ անոր խնամի ըլլալ կը
մտաբերէ. բայց երեւակայեալ Բրիտիոյ

ան ալ ապարդիւն եղնե-
քսիմիկանոս կայսր պարտա-
յաւ գաղղիկան գործերէն առաջ
էքսիմիկան մեկնել և իր Միւրամարի
ապարտեղ գառնայ որոյ խողով կեան-
քը Մէքսիկայի վերջովեայ կենաց հետ
փոխանակեր էր: Եւսպէս ահա Մէքսի-
կայի կայսրութիւնը վաղամեռիկ եղաւ:
Մաքսիմիկանոս կայսրն իշխանութիւնը
Պազէն մարաջախտին այն է Ղազարի
ձգած է դարձեալ և Ղազարի ալ Մէք-
սիկայի վրայ ունեցած առնելըներն ու
թերևս ծախքերն ալ ձեռք բերելու
համար Միւրամարի Ղազարի ալ հետ
կարգադրութիւն մ'ընելով՝ իր գործը
ետ պիտի քաշէ:

Փարիզ 26 նոյ,

Էնթէրնասիօնալ լրագիրը կը ծանու-
ցանք թէ Անգղիոյ կառավարութիւնը դո-
րաց թիւն աւելցնել պիտի առաջարկէ
խորհրդարանին:

Օսմ. ընդհ. պարտք.

Լոնտոն 28 նոյ. 32 3/4—33

Փարիզ 24 նոյ.

Մարսիլայի մէջ ցորենը բարձրացաւ.
մետաքսը կը բռնուի: Մէլանիկ 400 ֆր.
Բամպակն ալ վրայ կը գնէ: Լիվերքուլ
նոյ. 24. Իդլիք 9 1/2:

Օսմ. ընդհ. պարտք.

Փարիզ 24 նոյ. 34 3/4—34

Լոնտոն » 33 3/4

Ա.ԶԳԱՅԻՆ

ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԱՄԲԱՐԱՆ

Ըտեմբ ազգերը հրով, սրով, ա-
ւարսութեամբ և կոտորածներով ա-
ռաջ կերթային, այսօր գիտութեամբ
արուեստիւք և ճիտութեամբ: Ըտե-
մբ հզորագունին իրաւունքն ամեն ի-
րաւանց վրայ կը բռնանայր: Իսկ այսօր
տիրագունին իրաւունքն ալ յարգուե-
լով վիճակի մէջ կը դրուի օր քան զօր:
Սակայն ընկերութեան գերագոյն կա-
տարելութեանը հասած ենք արդ-
եօք, անշուշտ տակաւին շատ հեռու
ենք: Բայց արդէն ճանաչել երաժ ենք,
և կրնանք յուսալ որ եթէ ոչ գերա-
զոյն կատարելութեան, գոնէ աստիճա-
նաւոր կերպով լուսագոյն վիճակներու
կրնանք հասնիլ:

Իւ ի՞նչ է գերագոյն կատարելու-
թիւնը. միթէ մարդկային իրաց այսպի-
սի մեծ և փառաւոր տիրոջ մը կրնայ
արուել. միթէ ընկերութիւն մը՝ որ-
շա՛ւք ալ որ քաղաքակրթութեան մէջ
յուսած գացած և զարգացած ըլլայ՝
կրնայ թերութիւններէ ազատ ըլլալ:
Եսիկայ մէկը չկրնար պնդել: Բարա-
քակրթութիւնն ալ իր զեղծութիւնն

ունի, բայց զեղծութիւնը՝ որք մարդկային
մոլութիւններէ կը բխի և ոչ թէ նոյն
իսկ քաղաքակրթութեանէ. և քանզի
մարդկային մոլութիւնները ազէտ վայ-
րենի ու յարարոս ազգաց մէջ աւելի
մեծ չարիք և քիտանք կարողադրեն, և
մարդկային ընկերութիւնը բարոյովն
մաւառական լուսէ զնկելով անսոսա-
կան վիճակի մը մէջ կընկղմեն, և ստի
հարկ է որ քաղաքակրթութիւնն այն-
պիսի վիճակներէ միշտ գերազանց ճան-
չելով ընդունինք թէ և ինչ ինչ յարա-
կիւ զեղծութիւնը ալ ունենայ: Բա-
ղաքակրթութիւնը մարդոց ազատութե-
թիւն կուտայ, և երբ մարդիկ ազատ
կըլլան, չարիքի մ'առաջն առնելու
աշխատիլն ալ իրենց ձեռքն է:

Բայց ի՞նչ կերպով ազգ մը կրնայ
քաղաքակրթութիւնը իրենց յա-
ռաջ իմանալ իրեն համար մտածուած ալ
և այլ եղանակները դանդ կրնանք: Բայ
մեզ յառաջ իմանալ իրեն ամենէն ուղիւ և
ընտելան երանանք այն է որ ընկերու-
թիւն մ'իւր ներկայն հեռագէտէ բարեւ-
քելով ջանայ, և ասոր ալ անհատաց
ջանքն աւելի կը նպաստէ՝ քան թէ իշ-
խանաց հրամաններն և վարչութեանց
տնօրէնութիւնները: Իշխանութեան մը
այն կը պահանջուի որ անհատներու կա-
տարեալ ազատութիւն տայ, և ինքն
ընդհանուրին ապահովութեանը վրայ
միայն հսկէ: Եւս ճշմարտութեան վը-
րայ խորին կերպով համոզուած, ասկէ
երկու տարի առաջ ալ սոյն էջերուն
մէջ կըսէինք:

« Եւստատացեալ ազգաց գործն
« է անհատականութիւնն (էտիքիստիւ-
« ալիթէ) առ ոչինչ համարել և ամեն
« բան իշխանութեան ձեռք կատարել,
« որն որ յաճախ բարի գործերն անգամ
« բռնութեամբ կը կատարէ: Ուրեմն
« եթէ ամեն ազգային իրել անհատ
« իր պարտականութիւններն ու իրա-
« ւունքներն ի գործ դնէ, ոչ ևս վար-
« չութեան թիկունքը ծանր բեռ մը
« կը մնայ, զոր չկրնար ստանձնել: Սահ-
« մանագրութեան ոգին ալ նոյն իսկ
« այս սկզբանց վրայ հաստատեալ է:
« Երեսփոխանական վարչութեան պակ-
« տութիւնները մասամբ իւրի վարչու-
« թեան և մասամբ իւրի Եղբին կը
« վերաբերին ևայլն: »

Ըտեմբ այնպիսի ճշմարտութիւնն
են, որոց կրկնութիւնը միշտ օգտակար
է, որպէս զի ամեն մարդ ալ լաւ հա-
մոզուի ասոնց: Մեր վերաբերալ րո-
կըզուրեքին համեմատ, մեք ազգային
սոցալալապիտութիւնն իր հիմնական
պատճառներուն կը վերածենք, և վար-
չութիւնն ու Եղբը հաւատարմաբէս

պատասխանատու կը համարենք ներ-
կայ վիճակին խեղճութեանը: Բայց մեր
սկզբունքը չհասկնալներ կամ հասկը-
նալ չուզողները սխալ մեկնութիւններ
տուած են մեր ըրած խորհրդածու-
թեանը: Հոգ չէ, մեր դարձեալ մեր
սկզբունքը պնդելով կրնանք թէ ազգին
յուսած իմանալութիւնը կրկնակի միջոցն-
ւով, այսինքն դատարարական եամբ և
ճիտութեամբ միայն կարելի է գործադ-
րել, և թէ այս երկու միջոցները վար-
չութեանց տնօրէնութիւններով չեն
կատարուիր, այլ ամեն ազգային ան-
հատիկ ջանքով:

Ժամ է որ ամեն մարդ հասկնայ
թէ առանց ճիտութեան և դատարա-
րականութեան անհատը է յառաջագէտ
և բարեաւած ընկերութիւն մը կազ-
մել: Իսկ ճիտութիւնն ու դատարարա-
կութիւնը հաստատուն յարատեւու-
թեամբ, զոհողութեամբ, անխնայ ջա-
նասիրութեամբ, միով բանիւ անընդհատ
աշխատութեամբ միայն կրնայ դորանալ:
Բաղաքակրթութիւնն ուրիշ բան չէ,
բայց եթէ ժամանակին զիջած զարգա-
յուսմը, եթէ տոհմաւ առ տակաւ զար-
գացման ճանապարհին մէջ մտնենք, և
մեք մեզին իրարու ձեռնադրելով
առաջ երթանք, օր մը կրնանք մեր նը-
պատակին հասնիլ: Իսկ եթէ առաջ
նորդներու վրայ յոյս դնենք և մեք ան-
հոգ նստինք, յաւիտեան հասնելը չու-
նինք մեր նպատակին, այլ միշտ անկա-
րող, միշտ աժգոհ, միշտ պառակտեալ,
միշտ յուսահատ և միշտ ռամիկ ազգ մը
պիտի ըլլանք, ինչպէս որ դժբաղդաբար
և ցաւօք սրտի կը հարկադրելիք խոս-
տովանիլ թէ միշտ հիմա եղած ենք:

Եւս, եղած ենք, ինչո՞ւ համար մեք
զմեզ խաբէնք: Բայց յանցանքը բոլորովն
մեր չէր: Բաւական է որ այսօր ինչ-
քերտիկ զուրկին ժողովրդով և աչքերն
մեր չորս կողմը դարձնելով՝ մեր խեղճ
վիճակը տեսնենք, հասկնանք և դարման
մատուցանելու ջանանք: Այսին ոմանք
որ սահմանադրութեան վրայ մեծ յոյ-
սեր դրած էին, որոնցմէ էինք նաև մեք
ալ, բայց այն յոյսերը դժբաղդաբար
տակաւին ապարդիւն մնացին: Ինչո՞ւ,
վասն զի ամեն բանէ առաջ սահմանադ-
րութեան ոգին քիչերը հասկցած էին:
Եւս ամենայնիւ սահմանադրութեան ա-
պագային վրայ չենք յուսահատած, ա-
մեն բան ի սկզբան կայն ի կող կեր-
թայ և ժամանակն եկած ատեն կանո-
նաւոր ընթացք մը կրնալուն: Ինչպիսի
ապագայն պատրաստելու վրայ է, և ա-
մեն ճշմարտեալ ազգասեր և իմաստուն հո-
գիներն իրենց բոլոր ուշադրութիւնը
պէտք է սոյն կէտին վրայ դարձնեն:

Եւս ապայն պատրաստել: Ինչպէ՞ս

կարելի է այս նպատակին հասնիլ, ե-
թէ ոչ դպրոցներու միջոցաւ: Եւրա-
րե այս հարկն ամենայն ոք կըզայր բայց
հայկական երակաց մէջ դարաւոր թրմ-
ութիւնն այն աստիճան անհոգութիւն
տարաբայութեամբ է, որ ոչ միայն գործի մը
ձեռք զարնող դժուարաւ կը գտնուի,
այլ և շատերն իրարու վրայ կը ձգեն.
կոպտսեն որ այս ինչ իշխանը այն ինչ ա-
միսայն պէյլ, էֆէնային՝ որ մեծ հա-
րետութիւն ունի, բաժին մ'ալ հանէ
աղբին տայ, վարժարան մը կառուցանէ,
Պէկինաս մը ըլլայ, աղբին բարերարութե-
թիւն մ'ընէ: Սի՛ն յոյս, որ շատ ան-
գամ ի դերեւ երած ըլլալով ցնդելու վրայ
է հիմա: Եւստատեան, մեծագործ և
աշխարհաշէն հարուստներ երբեմն կըր-
նան դանուել, որք ազգին բարերար հան-
գիտանալու ազնիւ բաղձանօք փառեալ
արդիւնաւոր յիշատակներ կը թողուն:
Բայց որչա՞նք քիչ են այնպիսի վիտանախ
ոգիները, որչա՞նք մեր նիւթապաշտ դա-
րուն մէջ շատերն իրենց ճակտին քրտին-
քով զվատըրկած ոսկիներուն մէկ մասը
փոխանակ գոնէ մեծագործ նպատակի
մը յատկացնելով աղիւսացնելով՝ ա-
նարդ և անախտան նպատակներու կը
վասնեն, ուր իրենց անունը չէ թէ փա-
ռաց կաթոններու վրայ, այլ արհամար-
հանաց մէջ կը դրոշմուի:

Չենք բար թէ բոլորովն ազգն այն-
պիսեաց վրայ յոյս դրած է, բայց պէտք
է որ ամենափոքրակնի լութիւններն իսկ
վերջեն և իր զօրութիւնն իր վրայ վըն-
առեն: Եւս մը հարուստներէն հարաւա-
գոյն է՝ երբ կրնանք անց և հանգանա-
կութեան միջոցաւ բանի մը ձեռնադրուի
կրկայ: Թերեւս ըստերն ըլլան: միթէ
քիչ ընկերութիւնն եկեր գացեր են,
որք այսօր կան վաղը չկան և որք իրենց
անհատատուութեան պատճառաւ մին-
չև հիմա տակաւին տեւական բան մը
չեն կրցած ընել: Եւս լաւ ուրեմն,
վասն զի քանի մը տղայք իրենց դասերն
աղէկ չսովորեցան, գոյները վարժարանն-
ըր. վասն զի այսօր առեւտուրները գէշ
կերթան՝ վերջացնելիք փառաւանդութե-
թիւնը: վասն զի այս տարի մեր ցանած
սերմերը չկրցանք արդիւնաւոր կերպով
քաղել, ոչ ևս ցորենը երկրին բեղմնա-
ւոր ծոցոյն աւանդենք:

Ոչ, քանի որ ասոնք չենք կրնար թո-
ղուր օգտակար ընկերութեանց կազմու-
թիւնն ալ ինչ նպատակի համար կըլլան
թող ըլլան՝ չենք կրնար թողուլ: Ու-
րախ ենք ուրեմն որ քանի մ'ողջաւետ
և հեռատես հոգիներ՝ աղբին մէջ գի-
շերթիկ վարժարան մը հիմնելու գե-
ղեցիկ եռանդեամբ փառեալ բաժանոր-
դական ընկերութիւն մը հաստատած են,
գոր երկու շաբաթ առաջ լրագրոյս է:

Դաթի մայրապետէն աւելի պարկեշտ
վարուք՝ շալը գլուխը առած իւր վար-
ժարանը կը յաճախէ ամեն առտու:

Բօլէան ալ մերթ ընդ մերթ
ծածուկ առեւանգութիւններէ ետ չկե-
նար: Պէշիկթաշի յոյն պատանին ալ ըր-
ժըշկին երկարը առեւանգելուն համար
քարէ քար կը քաշի առուի և կը բղբը-
տուի:

Բարեկամ, շատ տխրեցայ առե-
ւանգութիւն բառին կրաւութեանէ,
ուստի թողութիւն ըրէք որ ըսեմ թէ՝
Բերայի նորարարած գծութիւնն ալ
թաղական խորհրդոյն առեւանգութեամբ
ըր լուծուելու ինդիլ մ'է:

Ըտեմբան ու ատենադպիրը ա-
ռաջնները կըլլան պաշտօնական բառե-
րը ծիծաղական բառերու հետ հաշու-
ցնելու մասին: տես իրենց նամակը որ
Իսկար լընութեամբ և կը վերջանայ «կոչ-
կախալը ցիօշիկն ու ու՛» Ո՛հ գործի վրայ
են երբ այդ պարոնները, և որչափ ալ
կ'սպառնան և կը գոռան տակաւին թէ
թաղեցւոց օրինաւոր քուէոմն են ընտ-
րուեր:

Ինչո՞ւ արդեօք այդ գծութեան

բրդած միջոցին քարոզէն անձնականին
վերաբերեալ վիճաբութիւն մ'ալ անոր
ասոր ձեռքը շղագայիլ սխաւ: Ես գայն
չկարողացի և կարգաւոր ալ փափաք չու-
նիմ, բայց ստոյգ է որ Բերայի թա-
ղեցւոց անունը առեւանգող սրիկային
լիկիւ հեղինակութիւնն իրեն արժա-
նաւոր տեղերը տեսայ: Եւստատեան
նիւ Բերայի և Սիւրեպալթաղի քա-
րոզէին և Խառն ժողովոյ անդամին հը-
րաւերը լսող մը և Պատրիարքարանի ներ-
կայացող յիմար մը եթէ գտնուի թող
նախ հարցուի իրեն թէ ի՞նչ հեշտու-
թիւն գրացեր է պիղծ թանաքին մէջ
թաթիւսած գրիչը լիկելու ատեն:

Սա տեղական թղթատարութիւնն
ալ մեքենայ մը եղաւ այդ տեսակ մարդ-
կանց ձեռքը որ նախատինք և հոյհո-
յութիւն ժայթքեն որու վրայ որ ուղիւ
տարիւնաւորներն ալ ժողջան սուրհան-
գակ մը գտան անոր մէջ: Գոր հա-
տատուած ատենները քանի մը ընտանիք
նամակատուիք իրենց խիստ մօտ տես-
նելով՝ նախատեսութեամբ ձգեցին հե-
ռացան իրենց բնակարաններէն և անշուշտ
առեւանգութիւններէն ապահով մնացին:

Իւս չէի մեկնել, անցեալները, թա-
ղերնիս բնակող երիտասարդ մը կը յի-
շեմ որ անանուն տոմարի մը ընդունէր
էր՝ այսպէս գրուած. « Երեսփոխար-
նը ինքզինքի վրայ ունեցած համարումը
դէշ չէ. ձեռնոցովը և գաւալանովը
Փարիզէնի մը կերպարանք կ'առնուաւ և
վննուոր մը պէս կը ձեմես: հերիք է որ
Երամենի բաւազրդիք ծոցը պահես»
Սուրտեան վարժարանին նոր արձակ-
ւած ուսանողն մը պէս գաղղիներէն իւ-
սելու համար: ո՛հ, անօթիս աղջկինե-
րը ջու աչքիք սոջև առանց կարագի
ե-իւսած թանի մը արժեքն ունին: Ի՛նչ
սիրուն եւ դատկական հաւկիթի նման
կարմուռի այտերովը և բազէի աչքե-
րովը: . . . »

Տեղական թղթատարութեան ցըր-
ւիլը դուռ ուրեք դուռ և կը դարնէ.
դեռ նոր նամակ մը բերու ինձ, որն որ
մինչև հիմա ընդունածներուն կարեւոր-
ներէն մէկնէ կրնամ ըսել, և բաւական
ալ հետաքրքրական ըլլալով մտածեցի որ
հաճելի կրնայ թուիլ ձեզ, ուստի կօ-
րնակեմ զայն որ աչքերնուդ առաջը
դնեմ:

Սիրելի իմ. . .
Գեռ այս իրիկուն իմացայ քու վերա-
դառնալը ի՞նչ օրիս: վաղ առաւօտ անուի-
ջապէս գլեզ տեսնել պիտի գամ: Բայց հիմ-
կու հիմա ճանապարհորդութեանը տաղու-
կութիւնները փոքր ինչ փարատելու հա-
մար, այս օրերս հասարակութեան խօսից
անպատ իւրիկոյ մը համառօտ յիշատակու-
թեամբ երկու խօսք աւելի ուղեցի դրել
քեզ:

Գիտես որ Պոստիլիք բարձրանք շատ կը
սիրեն, եւ ինչպէս որ Մօսկիւսքիտ օրերն է,
քիչ գործի տէրք շատ կը խօսին: Մանա-
ւանդ կանայք անխնայ են այդ բանին մէջ,
եւ ինչպիսիքն ջատագովելու համար
խօսք մը հնարած են որ բառին շղարքութե-
թեամբ կըլլայ, այսինքն « մըր բարձա-
սանք չէ, այլ բանն ասանկ է »: Եւ ասիկա է
անհատիկ անոնց ատօրեայ բարձրանալ
վերջարանը: Խղճահարներուն սիրտն ալ ա-
սով կը հանդէս:

Ուր որ երթամ, ուրիշ որ անցնիմ, ա-
կուսներու ծոցը, փողոցներու մէջ, տա-
նիքներու տակ, ջրերու վրայ, առեւան-
գութիւն կը խօսին: Լրագիրներուն ալ օ-
տար չէ այդ: Սատղիան վաղեմի երկրպա-
գուններ, որք երբեմն անհատին տառա-
պանքներով հաղիւ Հիմէնին ձեռքէն պոսկ

Ջերուէն մէջ ծանուցիւրք։ Մեր արդէն այս անգամ ձեռնարկին յաջորդութիւնը բարեմալութեամբ ենք յուսարարել որ բարեւաւ ազգայինը՝ զայն կատարելու յանձնառու եղող ընկերութեան նախագահին և գանձապետին ինչ աստիճաններէ թափանչու և բարոյական համարման տէր անձինք ըլլալն տեսնելով, անոր օգտան դակ ըլլալու չեն վարանիր։

Աւստի այս մասին կրկին չունենիր։ Լազարոյ 769 թուոյն մէջ հրատարակուած ընկերութեան տեղեկութիւնը մեզի հաղորդող մեծաբոյն համարակալին կարծիքը շատ մասերու մէջ համաձայն է մեր ալ մինչև ցարդ արտայայտած կարծեաց։ Նա ալ մեզի պէս ազգային փրկութիւնը դատարարութեան և դատարարութեան ծաղկելու ալ անհատական ջանքի մէջ կը նկատէ։ Այս համաձայնութիւնը թէև սկզբունքի նոյնութենէն ալեկամ չըլլայ, յոյս կուտայ մեզ որ նորակալման ընկերութեան աղբիւրը հիմնադրելով լուրջ կերպով ձեռք պարկած են զիշերութիւն վարժարան մը բանալու ծանր գործին։ Չկայ ազգային մէջ անհատ մը, որ անոր կատարեալ յաջորդութեանը չփախարի։ Չկայ արդէն մը որ ամեն մասամբ կարող անձանց ձեռքը հիմնալ այսպիսի ընկերական գործի մը յաջորդութիւնը խափանէ։ Չկայ դժուարութիւն մը որ անհատ ըլլայ յաղթել։ Աստուծոյ ունեցած որ առանց կէս ծանրան մնալու նորակալման ընկերութիւնն իր գործն յաւաքած անհոգի մը միայն իր բանալը վարժարանը հայ մանկուոյն ուսմանը առաջին կեդրոն մը, այլ և ուրիշ այնպիսի հաստատութեանց բազմաթիւն օրինակ մ'ըլլայ։

Բայց մեր բարեմալութեան հետ երկու դիտողութիւն ալ յաւելու հարկ կը համարենք։ Մայրաքաղաքի մէջ քանի մ'օտարազգի զիշերութիւն վարժարաններ կը գտնուին։ Բայց և ոչ մէկուն մէջ՝ եթէ չենք սկսել, աշակերտք արժանաւոր դատարարութիւն կառնուին, այլ անոնցմէ ելած աշակերտները՝ Եւրոպայի ուսումնարաններուն մէջ տարի համարներ միայն կրնան համարուիլ։ Աւստի Հայկազեան նորահաստատ զիշերութիւն վարժարանին յաջորդութեան գլխաւոր պայմանն այն է, որ ոչ միայն ուսմանը կողմանէ՝ այլ և ներթափանց մայրաքաղաքի օտարազգի ուսումնարանները գերազանցէ։ Ասոր համար պէտք է բնու գոհողութենէն մը փախել, քանզի՝ ըստ մեզ՝ վարժարանին հաստատութիւնն անկից միայն կախում ունի։ Ստորին կարգի զիշերութիւն վարժարան մը, ուր ոչ աշակերտք առաջին կարգի վարժարանէն

ներքէ ուսմանը առնելու բարձր ունեւնան, ոչ ալ ներթափանց գոհացողութիւն և կենաց պիտոյք գտնեն, անհրաժեշտ որ առաջ երթայ և կանգուն մնայ։ Մեր հայերը զարմանալի բնաւորութիւն չեն հաւնիր և միշտ օտարներուն դիմել կը սիրեն, ուստի մինչև որ հայուն աչքն իրական գերազանցութեամբ չարարեցնեն, մինչև որ բացառաբար մեզ ամեն տեսակ ուսմանը համար բանիլուն վարժարաններ չկարգեն, մինչև որ ներքին անբարեկամութիւն մը չհաստատեն, չեն կրնար շատ աշակերտներ ունենալ։ Այսպիսի մեծ գործի մը մէջ չնչին խնայութիւններ նկատելու չէ, այլ ամեն մասամբ կատարեալ վարժարան մը հիմնելու հոգ տանելու է։ Այս է ահա գործին յաջորդութեան գլխաւոր պայմանը, զոր ամենայն բարեմալութեամբ յիշեցնել պարտք համարեցինք։



Արքեպիսկոպոս Դարձեանի Պատարարութեան Պատմ. Կարգադրութեան յետևանքով մեզ հետ սփռուած լուրն արդէն առած ենք երեքշաբթի առաւոր օրաթերթով։ Հետեւեալ օրը՝ չորեքշաբթի՝ հանգուցեալ պէտքն յաղարարութիւնն կատարուեցաւ արժանաւոր հանգիստ, որուն ներկայ էին Ս. Պատրիարք Հայրը, տան եպիսկոպոսները, քանի չափ վարդապետք և մայրաքաղաքի համայն քահանայք։ Իսկ աշխարհական դասէն՝ ազգիս ամեն երեւելիներն և Ս. Պատրիարքի ժողովրդեան մէկ մեծ մասը։

Ժամը ցորեկուան 5 1/2 ժամ յատուկ Ս. Պատարար մատոյց Գեորգի Եւրեպայի Ս. եպիսկոպոս Պէշեկիթաշի եկեղեցւոյն մէջ՝ ուր փոխադրեալ էր հանգուցելոյն մարմինը։ Եւրոպայի հոգեհանգստեան պաշտօնը կատարուելով, Խաչիկը քարոզեց Գեորգի Եւրեպայի Ս. եպիսկոպոսը գեղեցիկ դամբանական մը խօսեցաւ, որուն մէջ հանգուցելոյն ջերմութեամբ բարեպաշտութեան, քրիստոնէական խոնարհութեան, հազուադէպ ողորմածութեան և բարեմալութեան բարեւարութեանը համառօտ նկարագիրն ընելով ազգին ըրած կորուստին մեծութիւնն ամենուրեք զգացուց։ Փոքիկեցան

ունենալու սիրտերը, և ամենուն աչքն յարուար համակեցան։ Պէշեկիթաշի աղբիւրը՝ եկեղեցւոյն և թաղին առաջնական խնամակալը, աղքատք՝ գործաւորական հայր մը, և մայրաքաղաքիս ամեն կողմերէն եկած ժողովուրդը՝ հոյակապ և առաւելին ազգային մը կորուսած ըլլալուն վրայ կը սգային։

Ժամը 8 ժամ հանգուցեալ պէտքն մարմինը եկեղեցւոյն վերցուելով՝ փառաւոր յուղարկուեցաւ թաղի Պէշեկիթաշի գերեզմանատունը տարուեցաւ և իր ընտանեաց դամբարանն ամփոփուեցաւ։

Եւրոպայի կը թողու հանգուցեալ պէտքն, որոյ հինգն արու։ Անգլիական Ս. Մարիոյն արա՛ իւր հօրը ջերմութեամբ կրօնավարութեան կենդանի տիրապարմէն, միւսներն ալ նոյնպէս առաքելի հօր մ'առաքելաւոր որդիք, անոր ազգականամբ բարեբարութեանը հետեւող և շարունակիչներն ըլլալն արդէն փորձով ցոյց տուած են։ Իսկ Արքեպիսկոպոս Դարձեանի մեծ պաշտօնին պայծառ յաջորդ կը թողու Ս. Պատրիարք պէտքն և մեծապատիւ Զակարի Եփեսոսի, որը իրենց համաձայն և ճարտարութեան գեղեցիկ արդիւններով արդէն տեղութեան համարումն ու սերը գրաւած և ազգիս ալ պարծանաց առիթ եղած են։ Անոր ներկայիս ենք որ նաև միւրթարութիւն պիտի ըլլան։

Մեծանուն հանգուցեալը Պէշեկիթաշի ամփոփեց և ազգիս առաջին բարեբարներէն մէկն ըլլալով, ազգային պատմութեան մէջ կարեւոր էջ մը ըրանք արժանի է։ Այս պատմաւոր իւր յատուկ կրօնագրութիւնն ալ հրատարակել պարտք կը համարենք, եթէ իր կենաց և գործոց վրայ մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ մեզ հաղորդուին իր մերձակորաց և ծանօթներուն կողմէն։

Ամսոյ 14 թիւ զիշերն ալ վսեմափայլ Պատրիարք Կարապետ պէտքն քեզ ալ Մարգարեան մեծապատիւ Մարտիրոս աղան՝ որ երկար ժամանակէ ի վեր հիւանդ էր, քրիստոնէական մահաւոր իւր կեանքը կնքեց ի հասակի 68 ամաց՝ ի խոր սուգ ընկզմելով իր սիրելի ընտանիքն ու բարեկամները։

Հետեւեալ օրը յուղարկուեցաւ թաղի ամփոփեց հանգուցելու շքեղ կերպով և մարմինն Իւսկիւտար իւր նախնեաց դամբարանն ամփոփուեցաւ։

Մարգարեան գերեզմանին ի վաղուց անարազելի բարեպաշտ և բարեհաճ ընտանիքներէն մէկն ըլլալով,

մը կորուցան, ծափ կը զարնեն իրենց արդի բարեբաւութեան վրայ, և հայրենական տունէն հեռու օրիորդին սխալական որոշման մեղադրանքն իրենց վրասուած անհաստատութիւնն արգահատել կը կարծեն։ Թանձնապատասխան Սեդակուններ կերպնուն՝ ոչ իրենց պատուոյն՝ այլ պէտքնուն վրայ, որ առեւանգեալը կրնային տեղը դարձնել եթէ նոյն ժամայն իմացած ըլլային։ Օրիորդներ կան՝ որոք համար առեւանգելու նշանակութիւնն իրենց իրաւունք ըլլայ այնպիսի ծախսով դրքի մը մէջ չիւնալու, ուստի կուտան զգուշաւոր ըլլալ։ Գուցէ անոնցմէ համարձակաբոյններն ալ ասոր ներքին իրենց համասեմին պէս փորձ մը ընել ուզեն։

Ըստի մտորանքոյն անհատ մը բարձրագոյն ընտանիքէ աղջկան մը հետ ամուսնանալու ընտանեաց անուանարկութիւնն է։ Զորք գերազատանքը թող չարատեսեն այն հաստատութեան մէջ՝ թէ իրենց աղջիկները անդրկայի լորտի, Գաղղիացի Իշխանի, Ռուսաստանցի Զօրապետի, Գերմանացի Ռօշիլիսի կամ Պարսկաստանցի Խանի մը պէտք են անմիջապէս հարսնացունէ։ Հայաստանի դաշտերն ու ձորերը թող չխայտան արաբիսի հանդէսներով, և այն հարուստ ժողովուրդները՝ որք միայն

իրենց սակինքովը կրնան պարծիլ՝ պաշտապաններու ձեռքը թող չհայցին։

Հայ ընկերութեան առողջին վիճակը վերանորոգութիւն կուզէ։ Գիտնալու է որ հասուն օրիորդք ամուսնանալու երիտաւարներէն չափ են, կամ չափ անդամ հարուստ ընտանեաց գիւղը չորս կամ հինգ աղջիկ մէկէն կայ, մինչդեռ մանչ գաւառներուն թիւը անոնց չհաւասարիր։ Միթէ այդ ընտանիքներն ուսեալ և բարեկրթ երիտաւարներ չեն կրնար ընտրել իրենց փեսայացիներու համար։ ասանկ ալ յաջորդներ թողու անձկացող հարուստները ինչչո՛ւն են իր թար աղքատներու մէջէն իրենց ամուսնանալու ընտրել։

Կեցցէ այն աղուականը՝ որ տարի մը առաջ սասնի գեղեցիկ օրինակ մը տուաւ ազգին։ Ս. Ս. Ժողովական ազնուական նոթիւնը լնականին հետ եւ ձորութիւն թիւնը հանձնարի հետ ընկերանալով՝ ընտրել և ձեռնհաս գերազատանքը կ'ստեղծագործեն։ Հարստութիւնը մասնաւորներու թով չմտար, և չքաւոր ու վաղարարացեալ ընկերութիւնը կրնայ կամայ կամայ գուրդը և կեանքը առնուլ։ ասանկով վերանորոգութեան գործին մէկ մասը սկըսւած ու յառաջ տարուած կ'ըլլայ։ Ընկերական զեղծութիւններն ալ ինչպէս են առեւ

անգութիւններն և նուազ հակամտութիւնները կանգնեցան։

Ինչ կըսէք այս նամակին, որչափ հեռու է ասոր պարունակութիւնը բարեկամի մը գալուստը շնորհաւորող լիզուէ։ Եւրոպայի որ այդ ամուսնութեան օրէնքներն իր շահուն համար այդ կարգադրութիւններն ընելու պէտք է։ Բայց ոչ ամուսնի մ'ունի և գուցէ իր ծանցեալը գնըր։ անունը ձեզի կըսեմ՝ երբ առանձին ըլլանք, բայց խիտ ցած ձայնով, վստի քն պատերն ալ ակնած ունին։

Իսկ մեք այսպիսի օրէնքի մը վայելքներուն բոլորովն անտարբեր՝ բաւական կը համարենք ուրիշներուն թիւնը և ուրիշները զուարճանալ և ընթերցողաց ալ հրահանգներ տալ։

Շարժումն նշանաւոր դէպքերէն մէկն ալ Պատրիարք Կարապետ Սեդակունի մահն է։ Հայրական ընկերութեան մէջ ջեն կարեւոր անդամ մ'ալ պահեցաւ, և աղքատքը զիշերութեան հայր մը կորսնցուցին։ Անգութիւն մահ մ'ըլլալի սոսկալի են ըստ առեւանգութիւնները։

անոր գլխաւոր անդամը հետզհետեւ պահելը ցուալն է։ Բայց կը յուսանք որ հանգուցեալ Մարտիրոս աղային բարեկեցեակ օրիքն՝ ազգին մէջ արժանաւոր տեղ մը բռնելով՝ իրենց նախնեաց յիշատակն աւելի կը պայծառացընեն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իւրայի հայկական թատրոնն այս տարի ալ պիտի բացուի, մեծարգոյ Պ. Ս. Հեքիմեանի տեսչութեամբ, որ անցեալ տարի ալ իր ջանքերը չէր խնայած թատերասէր հասարակութիւնը գոհ ընելու մասին։ Այս տարի աւելի մեծ խնամօք և պատրաստութեամբ կը բանայ թատրոնը, և կը յուսայ որ հասարակութիւնն ալ աւելի գոհ ըլլալով դարձեալ իր քաջարկութիւնը չզրկուար թէ՛ թատրոնին տեսչութեան և թէ՛ գերասանական խումբին, որք ալ զին մէջ հրահանգիչ զբօսաւայր մը չի խախտելու ճիգ կը թափեն։

Եւր թատերական շրջանն այս իւրիկուն ժամը 2 1/2 ին պիտի բացուի «Պուլիէրմա աշխարհակալ» անուն թատերգութեամբ, որուն մէջ տարակոյս չունինք որ գերասաններն ու գերասանահաններն իրենց մինչև հիմա ըստացած փորձառութեան և քաղաքականութեան յաջող գրաւական մը կուտան։ Այս ալ պէտք է ծանուցանենք որ այս տարի գերասանաց և գերասանահանաց ամենէն յաջողակները միացեալ ըլլալով՝ աւելի կատարեալ խումբ մը կազմած, և ամենն ալ հասարակութիւնը գոհ ընելու գովելի նախանձով միայն վառեալ են։ ուստի և քաջայայտ ենք որ այս տարի Արեւելեան թատրոնն աւելի յաջող և պայծառ շրջան մը կուտանայ։

Մայրաքաղաք հրատարակուած յունարէն գիրքով և տաճիկերէն լեզուով՝ Արաթօյն անուն լրագրող Պիլիտի գործերուն վրայ լրագրական օրինաց հակառակ յօդուածներ հրատարակուած ըլլալուն պատճառաւ՝ ամիս մը դադարելու հրահան եղաւ Բ. Գունէն։

Քուսիէ տ'Օրխանին մէջ հետեւեալ կը կորուստը։

«Օսմանեան կայսրութեան ամեն մեծ վերքերէն մէկն ալ բարձրատիպ անհատաբար անպատիւ մնալն է։ Այս անպատիւութեան պատճառաւ է որ գաւառացի մէջ գեղծութիւնը պահա չեն ի մնալ ժողովրդոց։ Ասոր օրինակ մ'է հետեւեալը զոր Արեւել կը գրեն մեզ նոյն 6/18 թուով։

«Ասկէց եօթն ամիս առաջ տեղ

բայց երբ հարուստ ընտանեաց գլուխը մահուան ճիւղին կ'իյնայ, ընտանիքն անոր մահը միայն կ'ողբան։ Ինչքէն աղքատը որ իւր սգոյ մարմններուն հետ չքաւորութեան գաւառութիւններովն ալ կը առաւաղի, ահաւասիկ Հայկական ընտանիքը, որուն գործարար նկարագիրը կը կարգադրէ անցեալ օր քահանայի մը վերած նամակին մէջ։ Հարուստ ժողովուրդը, իրենց միւրթարական գործերուն հետ աղէկ չէ՝ որ չմոռնան իրենց պէս սգաւոր՝ բայց դժբաղդ և անօգնական ընտանիք մը առատաձեռնութեամբ սիրով։ Իսկ հայ երիտաւարքը և ուսումնասէրը՝ որք Հայկական նիւն հեղինակութիւններն անորով կ'արգայած են, ասկէ գեղեցիկ առիթ մը կրնան գտնել անոր վատասանքը հանգստակութեամբ վարձատրելու։

Միւսի քոյր ՊԱՐՈՅՐ

Լոյս մաքսատանց նախորդ տնօրէն Լաւ-
եա Եֆէնտիկին վրայ կասկած ծագելով՝
քննուեցաւ և 1000 քսակի բայ մը գրա-
նուեցաւ մաքսատան հաշիւներուն մէջ:
Արապատէր որ Լաւեա Եֆէնտիկին
խիստ պատիժ մը պիտի կրէր: Բայց յիշ-
եալը Կ. Պօլսէն հեռագրով հրաման մը
բերել տուաւ որուն մէջ ըստած է թէ
Լաւեա Եֆէնտիկին հաշիւն մէջ գրա-
նուած բայը ոչ թէ գողութիւնն է, այլ
անուշադրութիւնն է յառաջ եկած է: Եւս
հրամանը բարձրաստիճան անձն մ'եկած
է, զոր ժամանակաւ Լաւեա Եֆէնտիկին կը
զուարճայրէ եղեր իր ծաղրաբանու-
թեամբը: Ուստի տեղւոյն իշխանու-
թիւնը դայն իր պաշտօնէն հանելէ ա-
ւելի բան մը չկրցաւ ընել: Հիմա յիշ-
եալ Լաւեա Եֆէնտիկին այնչափ խրախ-
տայած է իր անպատիժ քննուելու վրայ,
որ համարձակեցաւ Ոստիկանութեան
հեռագրով մը մեր գայմագամին դիմելու,
որուն մէջ գայն պաշտօնէն ձգելու հարա-
նայ իւր պաշտպանին ձեռք: Եւսպէս
ահա 1000 քսակ տէրութեան գանձէն
կը կողոպտուի պաշտպանութեան շնոր-
հիւ: »

— Չորեքշաբթի օրը երկգուգա-
թի նաւակ մը Իւսկիւտար գացած ժա-
մանակ հովին ուժգնութիւնէն տակնի-
վերայ եղաւ, և մէջը դանուած 7 շա-
նապարհորդք ծովուն յատակը երթալով
անհետ եղան: Միայն երկու նաւա-
վարները կրցան կեանքներին ազատել:

— Հռոմուի մէջ դրոշմի (տամկա)
գործակալ մը Իսմայիլ Եֆէնտիկին անուն
անուակէն 14 իւրա իր վրայ անցունե-
լով, և հաշիւ տալու օրերն ալ մօտ
ըլլալուն պատճառաւ՝ ստակ ճարելու
համար՝ անվաւեր տուրքի թէղքէրէնը
ասոր անոր տալու եղնիւ, խարդախու-
թիւնը երեւան եղաւ և մէկ տարի բան-
տարութեան դատապարտուեցաւ:

— Երգողական Թայմը լրագրին
մէջ հետեւեալ գանդառը կարգալով՝
Օսմանեան հեռագրաց վերատեսչու-
թեան ուղարկութեանը կը յանձնենը:

« Կոստանդնուպօլսոյ Պօստային
մէջ Լոնտոնի և Փարիզի հետ եղած
հեռագրական հաղորդակցութեանց ան-
տանելի վիճակը շատ խօսակցութեանց
նիւթ եղած է: Գանգատ կրկնելով զայ-
ն անհանգիստ կերպիւ հրատարակած Պօ-
սայի հեռագիրները ընդհանրապէս բո-
լորովին մաքսածին են, և Փարիզի ու
Լոնտոնի մէջ ոչ օրինաւոր Պօստայի
գործակալներէ (աժան տը շանտ), ոչ ալ
գուրսէն արժանահաւատ տեղերէ յառ-
նուած են, և ուրիշ գաղտնիքն չի գիտ-
ցուիր: »

« Երեք Փարիզի կամ Լոնտոնի
Օսմանեան գանձային գործակալարին
քովէ յանցանքը, կամ արդեօք Իւ-
սկիւտար Եֆէնտիկին »

լայն մէջ պաշտօնական հեռագիրներն
հրատարակուելէ առաջ փոփոխութիւն
կը կրեն: անկարելի է գիտնալ: Եւս
լայն մէջ պաշտօնական հեռագիրներն
ալ 36 կամ
48 ժամ ուշ չի հասնէին: Սակայն
մէկ հեռագիր մը կայ որ 12-15 ժամէն
կը հասնի, և զայն առնող բարեբաղ-
անձը հետեւեալ միջոցը կը գործածէ:

« Գործակալ մ'ունի (թերեւ շատ մը)
որ հեռագրական կայաններուն կաշառք
կուտայ — ըսէ 5 000 Ֆրանք — որպէս
զի ուրիշ հեռագիրները ետ ձգուելով
միայն իր անընդմիջ հեռագիրն ամենեւն ա-
ռաջ երթայ: Եւսպիտի գործակալ մը
գանձուելն ստոյգ է: այսօր թիւքար կեր-
թայ, փայն ուրիշ տեղ մը, և արդարեւ
այն է որ հատարակութիւնը զրապէս
կը խուզուի: Եւս խարճական հարկից
նկատմամբ հեռագրական տեսչութեան
զուրկներուն վրայ կասկած մը չկրնար
ըլլալ, բայց որովհետեւ փառապանութե-
ան օրինաւոր շահերը կը փառնուին,
և դեպքանքներէն հեռագրական զրկուած
հեռագիրները և այլն նմանապէս ետ կը
մնան, որպէս զի այս գայթակղական ձեռ-
նարկութիւններն յաճողին, ուստի գան-
գանները կը բազմանան և կը խնդրուի
որ բարեկարգութիւնը պահուի, և կա-
շառք գործակալը ինչպէս նաեւ կաշառ-
եալ պաշտօնէն գանձուին, թէ՛ Տաւ-
կոստանի, թէ՛ Սէրպիլի, թէ՛ Եւստ-
րիոյ և թէ՛ Օւլիցցէլայի մէջ, ուր ալ
որ ըլլան: »

— Փարիզի Սէն Գերմին վրայ այս
օրերս փոքրիկ շողեւան մը և միակի մը
փորձուեցան, որք ներքեւէն միայն մէկ
անուակ մը ջուրին վրայ կը քայլէն առանց
յուզմունքի և անոր պատճառաւ և ա-
ռանց խալ ուրիշ տեսակ շողեւանի նա-
ւերու պէս յնցուելու: Եւսպիտի գառ ա-
մենայն գիւրութեամբ կրնայ ետ և ա-
ռաջ երթալ, ուզած կողմը դառնալ,
կանգ առնուլ, վերջապէս ամեն շար-
ժումընէ: Եւսպիտի մեքենան նա-
ւուն մէջ և անիւն ալ ջուրին ներքե-
լըլալով, ոչ միակի կը փախայ և ոչ
ուռնիք, և աւելուած ժամանակ ալ դի-
րաւ կրնայ նորոգուիլ: Եւս ամեն առա-
ւելութեանց հետ միանգամայն քիչ ա-
ծուի կ'սպառէ եղեր:

— Գաղղիացի զինագործ մը՝ Լա-
պարոն անուն՝ նոր հրացան մը հնարե-
ր է, որ երկրորդականութեան միջոցաւ կը
բռնի և մէկ վայրկեան մէջ տան և վեց
հարուած կարծակէ:

Ուրիշ հրացան մ'ալ Գերմանիոյ
մէջ հնարուի է որ 14 կամ 15 հար-
ւած կուտայ մէկ վայրկեան մէջ: Եւս
երկու հրացաններն ալ փորձի ենթարկ-
ւած են:

— Գաղղիական լրագրի մը խօսքին
նայելով, Գաղղիոյ Սէն Լյուիէն քա-

ղաքին մօտերը բնակեալ գաղղիացի մը՝
առանց շերտի օգնութեան թիւերի
տեղեկութիւն մետաքս արտադրելու հը-
նարքը գտեր է:

Եւս գէտը կ'ընէ ստոյգ է՝ աշխար-
հի ամենէն մեծ և կարեւոր արտադրան-
քն մէկուն մէջ հիմնական յեղափո-
խութիւն մ'է ամբաւ հետեւեալ, բայց
գիտարահաւատալի կերելի մեղ:

Կ. Պօլս 10 նոյ. 1866.

... Խաղաղութիւն...
Թշուառաց արգահատելի վիճակ մեր
կարեկցութիւնը շարժելով, իրեն ազգա-
յին անհատ մը մարդկութեան նուիրական
պարտականութիւնն ըստ կարի կատարելու
զիտաւորութեամբ սոյն երկուողիւս կը
ճանուցանեմ ձեր մեծ ապատուութեան, որ
սարեւոյ հովա. 1 էն սկսեալ գեղարանիս
մէջ շարաթը երկու անգամ՝ այսինքն եւ-
րեքշաբթի եւ ուրբաթ օրերը՝ կարօտելոյ
համար ձեր բժիշկ ունենալէս զատ, պատ-
րաստ եմ նաեւ պէտք եղած դեղերը մա-
տակարարել: Բաւական է որ կարօտեալնե-
րն իրենց թաղին թաղ. խորհրդոյ վկայա-
դրով մեղ ներկայանան: Գեղարանս է Կ.
Պօլս Կոստա փողոց թիւ 107:

Բարեհաճեցէք... Խաղաղութիւն, սոյն
զիտաւորութիւնն առաջ երթալու համար
հրատարակել ձեր ազգագրաւ լրագրոյ մի-
ջոցաւ:

Ճ. Կ. Ս. Կ. Կ. Կ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԿԸՂԱՆԻՒՄ ԳԵՐԳԵՒԻ

ՏՂԱՏՈՑ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՎԱՍԵՄ

ԳՐՈՒԱԾՈՑ

ԵՒ

ՇԱՀԱՆԻՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Օգտակար և հրահանգիչ գրքոյ
մ'է, 48 երեսէ բաղկացեալ, բարոյա-
կան գեղեցիկ խրատներով լի, խիստ
քաջարարմար տղայոց կարգին պարգև
արուելու պատուելի վարժապետաց

ԹՈՒՂԹ ԵՒ ԳՐՈՒԹԵԱՆ ՊԵՏՈՅԻՆԵՐ

ՁԻՆԻԼԻ ԽԱՆԻՆ ԳՈՒՆ ԿԻՑ ԹԻՒ 12 ԵՒ 14 ՄԵՐԱՆՈՑՆԵՐԸ
ԱՍԵՆԱԾԱՆ ԳԻՆԵՐՈՎ ՄԵԾ ԵՒ ՄԱՐ ՎԱՅԱՍՏՈՒՆՔ

Յ. ԱՐՇԱԿ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին արգոյ հասարակութեան ծանուցանելու, որ ամեն տեսակ
թուղթեր և դրութեան պիտոյքներ, ինչպէս տետրակներ, կաղամաններ, ընդ-
օրինակութեան մամուլներ, զրկ, մեքան, կիւքամ, կանոն, դրաւալ, և այլն
և այլն Եւրոպայի գործարարաց հետ ուղղակի յարաբերութեանց շնորհիւ կա-
րող են պօստ ամեն թղթաւորութեան անելու ամեն գնեցող ծախելու թէ
անուակով և թէ հատով ուղղութեամբ: Հասարակութեան գիւրութեան հա-
մար վերջին գիններ օրինակներուն վրայ նշանակուած են, անուակով կամ շատ
առնուղներուն համար օրինաւոր գեղըլըլալու պայմանաւ: Գաւառներէն թուղթ
և այլն ուղղութեամբ կրնան գիւրութեամբ ստանալ, և այնպիսեաց օրինակներն ալ
կը գրուին, ծախքը իրենց վրայ ըլլալով: Նամակները պէտք է վճարուած ըլլան:

Ա. Ռ. Ե. Ի. Տ. Ր. Ա. Կ. Ա. Ն.

ԳՐԱՄՈՑ ԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	Հինգր. 10	Ուրբաթ 11
19 ՆՈՅԵՄԲԵՐ		
Օսմանեան լրագր. Մէճ. . .	404	404
Բանաւոր արժաթ . . .		
Էսհաբ ումուտի . . .	36	35.35

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ՆՈՅԵՄԲԵՐ

Ա. Ր. Ս. Ի. Ք.

Յորեն Թայմի կարծի	34-36
» Խամայի »	33-35
» Ռուս. Պալլադ »	27-33
» Վառնա »	27-31
» Իսթաբուլ կալուղ »	30-32
» Կալայ »	30-33
» Պուրկալ »	28-31
Երկրորդ օրինակ կալայ »	14-15
Գարի »	14

Մ. Ե. Ս. Ա. Ք. Ս.

Պուրա կարծ թէ՛ քէ	570-580
» երկան »	560-580
Շաքի հօխան Փրանք »	
» Պարսկա »	50

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Բանակ Պալլադ	Հօխայ
» Կէյքէ »	— 11.20
» Ստանա »	— 12
» Ռուսաստան »	— 11.20
» Բուրդ Էնկիւրի Բուրդու »	— 11.20
» » Էնկիւրի Բուրդու »	— 8
» Պանտրուա Էնկիւրի »	— 8
» Զէյրի Էնկիւրի »	— 13.20
» Թոխա »	— 12
» Զորու »	— 09
Մաղը սիւ »	— 16
» Զերմակ »	— 0
» Թիթի Էնկիւրի »	— 45
» Կիթի Էնկիւրի »	— 250
» Կիթի Էնկիւրի »	— 23
» Կիթի Էնկիւրի »	— 16
» Կիթի Էնկիւրի »	— 23.20
» Կիթի Էնկիւրի »	— 23
» Կիթի Էնկիւրի »	— 0
» Կիթի Էնկիւրի »	— 0
» Կիթի Էնկիւրի »	— 8
» Կիթի Էնկիւրի »	— 8
» Կիթի Էնկիւրի »	— 7.20
» Կիթի Էնկիւրի »	— 7
» Կիթի Էնկիւրի »	— 4.10

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Կարգ	Հօխայ
» Կարգ »	— 11.20
» Կարգ »	— 12
» Կարգ »	— 11.20
» Կարգ »	— 11.20
» Կարգ »	— 8
» Կարգ »	— 8
» Կարգ »	— 13.20
» Կարգ »	— 12
» Կարգ »	— 09
» Կարգ »	— 16
» Կարգ »	— 0
» Կարգ »	— 45
» Կարգ »	— 250
» Կարգ »	— 23
» Կարգ »	— 16
» Կարգ »	— 23.20
» Կարգ »	— 23
» Կարգ »	— 0
» Կարգ »	— 0
» Կարգ »	— 8
» Կարգ »	— 8
» Կարգ »	— 7.20
» Կարգ »	— 7
» Կարգ »	— 4.10

Մասիս լրագրոյ բաժնեդրութեան տե-
ղերն են: Կ. Պօլս 2 ինիլի խան վերի յար-
կը Բ. 7, Մասիսի խմբագրատունը:
Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց սենեակները:

ԻԶՄԻՐ. Յարութիւն աղա Տեհեհան.
ՆԻԿՈՒՄԻՐԻՍ. Բախլայէ աղա Բանչուկ-
եան.
ԱՏԱԲԱՏԱՐ. Պ. Յալոյ Սալմաթեան.
ԹԵՔԻՐԵՍԱՂ. Յարութիւն աղա Շու-
շանեան.
ԱՆԿԻՐԱՆՈՒԹԻՒՆ. Մանուէի Սա-
քիս աղա Գալուստեան:
ՏՈՒՄԵՐԵՐ. Պ. Խալապուր Էմմաեան.
ԿԱՐԻՍ. Կարապետ պատուելի Զա-
բարեան.
ՀԱԼԷՊ. Նիկողայոս աղա Տեհ Մար-
գարեան.
ԵՐԶՐԱՍ. Ընթերցասիրաց Թանգարան.
ՎԱՆ. Գրիգոր աղա Բաճալեան.
Ուրիշ քաղաքներէ ստորագրուի ու-
ղղութեան տեղերն մեկուն հետ կրնան
ըղբակցիլ:

Խալապուր-Տեհեհան

Կ. Ս. Ի. Բ. Ի. Բ. Ի. Բ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԿՈՑ

Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԵԼԻ ԽԱՆ